

# Ժամանակագրութիւն Հայկական Տասնհինգի (ՀԱՏՈՒԱԾ)

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

## ՄՈՒՏՔԻ ՓՈՒՍՆ

Հայկական Տասնհինգն անբաժանելի մէկ մասն է թուրանականութեան դժած եւ Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան կողմէ իրականութեան վերածուելու սահմանուած թրքացումի ծրագիրին (1) : 1910 թ.ի Օգոստոսին (2) Սելանիկի մէջ կայացած Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան Համաժողովի որոշումները յանդեցան Օսմանեան Կայսրութիւնը բռնի կերպով թրքացնելու եղբակացութեան(3), որ 1911 թ.ի Յունուարէն մինչեւ Մարտ միայն Պալքաններու մէջ պիտի խլէր կեանքը երկու հազարէ աւելի օսմանեան քաղաքացիներու եւ հաշմուած ու վիրաւոր ձգէր հինգ հազարէ աւելի ուրիշներ(4) : Սկսուած այս գործը զոհացուցիչ արդիւնքի մը հասցնելու համար՝ Սելանիկի 1911 թ.ի հոկտեմբերեան Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան Համաժողովը վաւերացուց 1910 թ.ի որոշումները եւ անգամ մը եւս թելադրեց ջարդերով յառաջ տանիլ թրքացումը Օսմանեան Կայսրութեան(5) :

1911 թ.էն ետք Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան սելանիկեան կեդրոնը փոխադրուեցաւ Պոլիս, ուր սկսան կազմակերպչական աշխատանքները Մասնաւոր Կազմակերպութեան(6), որ պիտի իրականութեան վերածէր Սելանիկի որոշումները : Առ այդ՝ 24 Յունուարի 1913 թ.ին, Էնվերի հրահանգով՝ Էշրեֆ, իր մտերիմներէն եւ գործակիցներէն մէկը, ձեռնարկեց Մասնաւոր Կազմակեր-

պուլթեան թեւի մը ստեղծումին, որ Իզմիրի(7) շրջանին մէջ պիտի բնաջնջէր հայերն ու յոյները՝ հոն տարածել կարենալու համար դադափարաբանութեան հետ նաեւ իրագործումը Քիւրթնիլիւքին(8) :

Յաջորդ տարի, 24 Փետրուարի 1914 թ.ին, նոյն մարզերը որոշեցին շատ աւելի տարածուն դարձնել Մասնաւոր Կազմակերպութիւնը(9), որպէսզի անոր միջոցով կարելի ըլլար միանգամ ընդմիջտ ձերբազատուիլ Հայկական Հարցէն(10) : Առ այդ՝ էնվեր էշրեֆի տրամադրութեան ներքեւ դրաւ յիսուն հազար թրքական ոսկիի գումար մը՝ զինուորական գաղտնի աղբիւրներէն(11) : 1915 թ.էն ետք, որոշ շրջան մը, հայերէն կողոպտուած հարստութիւնը օգտագործելէ ետք Մասնաւոր Կազմակերպութեան ծախսերուն համար(12)՝ 1917 թ.ին էնվեր ստիպուեցաւ երեք հարիւր հազար թրքական ոսկի եւս տրամադրել իր աջ բաղակն եղող այս ջարդարարին, որ այս անգամ դործի անցնէր արաբներուն դէմ(13) :

Անկէ ետք դէպքերն առին արագ ընթացք : 2 Օգոստոսի 1914 թ.ին ստորագրուեցաւ թուրք-գերմանական զինուորական դաշնագիրը(14), որ պաշտօնական հիմնարկէքը կատարեց Հայկական Տասնհինգին(15) : Հոկտեմբերի 1-ին ջնջուեցան օտար պետութիւններու տրուած առանձնաշնորհումները(16) : 28 Հոկտեմբերին Օսմանեան Կայսրութիւնը ձեռնարկեց պատերազմական գործողութիւններու Սեւ Մոլի ուսական միաւորներուն դէմ(17) : Նոյն տարուան Նոյեմբերի կէսերուն տեղի ունեցան ջարդերը Արտուինի մէջ՝ զայն դրաւող թրքական բանակին կողմէ(18) : 20 Նոյեմբերին յայտարարուեցաւ Սրբազան պատերազմը(19), որ ինչպէս կը վկայէ Օսմանեան Կայսրութեան մէջ գործող Գերման Զինուորական Առաքելութեան պետ մարաշխտ Լիման Փոն Զանտերս, գործադրուեցաւ միմիայն թրքահայութեան դէմ(20) : Իսկ «1915 թ.ի Յունուարի կէսին», ինչպէս կը գրէ Հայկազն Գ. Ղազարեան, «Իթթիհատը՝ Նուրը Օսմանիէի ահումբին մէջ (Կ. Պոլիս) զիշերները շարունակաբար ժողովներ գումարեց, հայոց բնաջնջման ձեւին եւ մեթոտներուն մանրամասնութիւնները ճշդելու եւ գործադրելու համար, - կառավարական, քաղաքական եւ զինուորական ուժերու միջոցաւ(21) : Բերանացի եւ դրաւոր հրահանգներ տրուեցան մասնաւոր ներկայացուցիչներու (մեմուրը մախաուս), ինչպէս նաեւ կուսակցական պատասխանատու քարտուղարներու (ֆեաթիպը մեսաւլ) եւ շրջուն թուրք երեսփոխաններու : Ներքին գործոց նախարարութիւնն ալ նոյնանման հրահանգներ (յաճախ ծածկագիր) հաղորդած էր կառավարիչներուն, որոնց կը գործակցէին քաղաքային ոստիկանական պաշտօնատուները եւ ոստիկան զինուորներու վարչութիւնը (ժամուարմա տայիրէսի), որոնք կազմակերպեցին իրենց

դանուած քաղաքներու եւ շրջակայ հայ դիւղերու բնաջնջման ծրագիրը»(22) :

Այս բոլորէն ետք՝ Հայկական Տասնհինգն ստացաւ իր ընթացքն այնպէս՝ ինչպէս որ կը գտնենք զայն առկայ եղող թրքական եւ այլ վաւերագիրներու մէջ :

## 1915 թ.

2 Յուլիուարի 1915.— Ռուսական բանակներուն մեկնումէն ետք Ուլմիայէն, Սաւմաստէն եւ շրջակայ այլ վայրերէն(1)՝ դէպի Նոր Զուղա սկսաւ արտադաղթը հայերուն եւ ասորիներուն, որոնցմէ մեծ թիւ մը ինկաւ ճամբան եւ կոտորուեցաւ հալածող թրքական եւ քրտական զինեալ ուժերուն կողմէ(2) :

2 Փետրուարի 1915.— Պոլսոյ գերման դեսպանատունին մէջ տեղի ունեցաւ տեսակցութիւն մը ընդմէջ Օսմանեան Կայսրութեան Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան կառավարութեան ներքին զործերու նախարար Թալէաթի եւ գերման դեսպան Վանկենհայմի, որուն ընթացքին թուրք նախարարը պարզեց գերման դեսպանին հայերու դէմ ձեռք առնուելիք միջոցառումները, շեշտեց անոնց անհրաժեշտութիւնը եւ խնդրեց որ Գերմանիա արգելք չհանդիսանար անոնց գործադրութեան : Տեսակցութիւնը արդիւնքն էր այն «չա՛տ գաղտնի» հանդիպումին, զոր Պոլիս հրատարակուող Սապահ թերթի խմբագրապետ Տիրան Քելեկեանն ու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ղեկավարներէն է. Ակնունին ունեցած էին Վանկենհայմի հետ, նախ քան յայտարարութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմին եւ որ նուիրուած էր Հայկական Հարցի արդար լուծումին(3) :

12 Փետրուարի 1915.— Սկսաւ պաշտօնէ արձակումը պետական հայ պաշտօնէութեան, զինաթափումը օսմանեան բանակի հայ զինուորականութեան, կազմութիւնը բանուորական վաշտերուն, մեկուսացումն ու բանտարկութիւնը օսմանեան բանակի հայ սպայութեան, առաջին բռնադրաւումները հայերու գոյքերուն, եւ վերջնական ծրագրումը հայերուն ջարդը իրագործելու սահմանուած հրոսակային ուժին(4) :

14 Փետրուարի 1915.— Պոլսոյ Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան Նուրը Օսմանիէ կեդրոնին մէջ Թալէաթի եւ Զիա Կեօքալպիի նախագահութեան ներքեւ սկսաւ ժողովը Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան Կեդրոնական Մարմինին, որ որոշեց հիմնովին բնաջնջել հայութիւնը եւ այդ ձեւով չքացնել Հայկական Հարցը : Առայդ ստեղծուեցաւ Երեքներու Գործադիր Կոմիտէն, որ պիտի հսկէր

րնաջնջումի ծրագիրին գործադրութեանը վրայ: Ժողովն աւարտեցաւ 16 Փետրուարին (5): Նոյն օրը, երբ կը բացուէր ժողովը, պահարուեցաւ Տէօրթ Եոլը, ուրկէ զինուորական իշխանութիւնները հաւաքեցին մօտաւորապէս 1600 հայ երիտասարդ, որոնք հետիոտն տարուեցան Ինթիլի, ուր անոնք աշխատեցան ճամբաներու շինութեան մէջ, մինչեւ Մարտի վերջերը(6):

18 Փետրուարի 1915.— Երիտասարդ-թուրք Կուսակցութեան կեդրոնական Մարմինի լիազօր Պեհաէտտին Շաքիրի ստորագրութեամբ յղուած նամակներով Երիտասարդ-թուրք Կուսակցութիւնը հաղորդեց շրջաններու իր պատուիրակներուն հայերու ընաջնջումին որոշումն ու ծրագիրը(7), երբ միւս կողմէ՝ Պրայըն, Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղարը, կը պահանջէր Պոլսոյ ամերիկեան դեսպան Մորկնթոյէն, որ փորձէր թըրքական կառավարութեանէն սպահովել հրահանդ մը Պաղեստինի եւ Սուրիոյ քաղաքային եւ զինուորական իշխանութիւններուն ուղղուած, թէ անոնք պատասխանատու պիտի բռնուէին հրեաներու եւ քրիստոնեաներու կեանքին եւ դոյքերուն համար՝ ջարդի կամ աւարառումի մը պարագային(8):

19 Փետրուարի 1915.— Բանտերէն ազատ արձակուած մարդասպաններով եւ ոճրագործներով կազմուեցաւ ջարդարար այն ուժը, որ Մայիսի կէսերուն պիտի ջարդէր զինաթափ եղած եւ Կարինի դիժին վրայ աշխատող հայ զինուորները(9):

20 Փետրուարի 1915.— Տեսակցութեան մը ընթացքին Թալէաթ վստահեցուց Մորկնթոյն, թէ հայերու եւ հրեաներու ո՛չ մէկ վրտանդ կը սպառնար եւ թէ անոնք լաւապէս պաշտպանուած էին(10):

1 Մարտի 1915.— Սուլթանական հրամանագիրով մը լուծուեցաւ Օսմանեան Կայսրութեան Երեսփոխանական ժողովը՝ կանխելու համար անկէ զայլք որեւէ ընդդիմութիւն Երիտասարդ-թուրք Կուսակցութեան կառավարութեան ներքին եւ արտաքին քաղաքականութեան(11):

10 Մարտի 1915.— Զէյթունի զինուորական «փախստականներուն» հարցով 2 Մարտի 1915 թ.ին դիմելէ ետք Թալէաթին՝ Սիսի պահակալ Սահակ Կաթողիկոս 10 Մարտին դիմեց Օսմանեան Կայսրութեան Երիտասարդ-թուրք Կուսակցութեան կառավարութեան ծովային նախարար եւ Օսմանեան Զորքորդ Բանակի ընդհանուր հրամանատար Ճեմալ փաշային, որմէ նոյն օրն իսկ ստացուած պատասխան մը կը յայտնէր, թէ «ձեռք առնուելիք միջոցառումները միայն օրինազանցներուն պիտի վերաբերին. անմեղ եւ հաւատարիմ ժողովուրդին ինչքը, կեանքն ու պատիւը սուրբ են եւ անձեռնմխե-

լի»(12) : Քանի մը օր ետք, 16 Մարտի իր գերութեամբ ձեմալ կը կրկնէր նախապէս իր ըսածները(13), մինչ նոյնը կը հաղորդէր ձեմալի տեղակալ Ֆարխետտին Շեւքի փաշայի 27 Մարտի թուակիր հեռագիրը, զոր ղրկեւր էր Սահակ Կաթողիկոսին(14) :

16 Մարտի 1915.— Տեղի ունեցաւ տեսակցութիւն մը ընդմէջ Սարգեւորդի գերման հիւպատոսի փոխանորդին եւ Սարգեւորդի կուսակալին, որուն ընթացքին վերջինը յայտարարեց, թէ «Թուրքիոյ մէջ հայերը պիտի բնաջնջուէին, եւ պէտք էր որ բնաջնջուէին. ա՜նոնք հարստացած էին եւ այնքան բաղմացած որ իշխող թուրք ցեղին համար վտանգ մըն էին դարձած. ...Բնաջնջումը միակ դարմանն էր»(15) :

18 Մարտի 1915.— Տեղի ունեցաւ տեսակցութիւն մը Հալէպի գերման հիւպատոս Րէօսլերի եւ ձեմալ փաշայի միջեւ, որուն ընթացքին ձեմալ հրամայեց գերման հիւպատոսին «միջամուխ չըլլալ կառավարութեան գործերուն եւ պնդեց՝ որ զինուորական իշխանութեանց հրահանգներուն համակերպի, քանի որ՝ ինք անձնապէս թուրքերուն արգիլած էր հայերուն վրայ յարձակիլը, սպառնալով զիրենք նկատել՝ իբրեւ հանրային կարգ ու սարքի խանգարողներ : ...Միւս կողմէ, ձեմալ փաշա, կառավարութեան կողմէ հայերու դէմ ձեռք առնուած միջոցներուն եւ անոնց գործադրութեանց խուսուփիւնը զէյթունցիներուն մէկ ապստամբութեան կը վերադրէ(Բ)» (16) :

25 Մարտի 1915.— Պեհաէտտին Շաքիրի ստորագրութիւնը կրող երկրորդ նամակ մը կը վերլիչեցնէր 18 Փետրուարի 1915 թ.ի նամակին բովանդակութիւնը եւ կը քննադատէր այն բոլորը, որոնք կրնային ընդդիմանալ հայերու եւ այլ ոչ-թուրք տարրերու բնաջնջումին համար ձեռք առնուած որոշումներուն եւ միջամուխներուն(17) . նոյն թուականով թալէաթ կը հրահանգէր Ատանայի կուսակալութեան ձերբակալել կուսակցական հայ ղեկավարները, լուսանկարել զանոնք անոնց մօտ գտնուող զէնքերով եւ նախարարութեան հասցնել այդ լուսանկարները(18) :

29 Մարտի 1915.— ձեմալ փաշա Փրանսերէնով հրապարակեց շրջաբերական ազդարարագիր մը, որով կը սպառնար այն բոլորին, որոնք որեւէ պատճառով կը յարձակէին ուրիշին վրայ, եւ կը յանձնարարէր, որ ամէն մարդ, առանց ցեղի եւ կրօնի խտրութեան, համակերպէր իշխանութիւններու հրահանգներուն եւ կարգադրութիւններուն(19) :

31 Մարտի 1915.— Օսմանեան Կայսրութեան Երիտասարդ-թուրք Կուսակցութեան կառավարութեան պատերազմական նախա-

րար էնվերի հրահանգով դադարեցաւ հրատարակումը Երիտասարդ-  
թուրք Կուսակցութեան քաղաքական դաշնակից Հայ Յեղափոխա-  
կան Դաշնակցութեան Պոլսոյ պաշտօնաթերթ Ազատամարտին եւ  
իմբագիրներէն մէկը, որ պարսկահաստակ էր, ձերբակալուեցաւ :  
Այս մէկն եղաւ յայտարար առաջին նշանը պետական նրբանցքնե-  
րուն մէջ տեղի ունեցող խորհրդաւոր եւ մութ դաւադրութեան(20) :

4 Ապրիլի 1915.— 3 Ապրիլին Հիրճ դիւղին մէջ Իշխանի եւ իր  
ընկերակիցներուն տմարդի կերպով սպանութենէն օր մը հտք՝ Ծա-  
տախի մէջ թուրքերն ու քիւրտերն անցան յարձակողականի դաւա-  
ռին կեդրոնը եղող Թաղ դիւղին վրայ : Ծատախի ամբողջ դաւառը  
դիմեց ինքնապաշտպանութեան, որ տեւեց քառասուն օր եւ հասաւ  
էր աւարտին միայն Մայիսի 10-ին՝ յառաջացող ուսական բանակ-  
ներուն առջեւէն փախուստ տուող թրքական իշխանութեան եւ բա-  
նակներուն մեկնումով(21) :

8 Ապրիլի 1915.— Սկսան Զէյթունի(22) եւ շրջակայքի տեղա-  
հանութիւնն ու աքսորը(23), երբ անդին, Պոլսոյ մէջ, տեսակցու-  
թեան մը ընթացքին Թալէաթ կը վստահեցնէր Զաւէն Պատրիարքը,  
թէ Օսմանեան Կայսրութեան Երիտասարդ-թուրք Կուսակցութեան  
կառավարութիւնը չէր վարեր որեւէ մասնաւոր քաղաքականութիւն  
հայերու նկատմամբ(24), մինչ, իրականութեան մէջ, նոյն օրն իսկ  
անիկա կը դիմէր զինուորական իշխանութիւններուն, որ ամբողջա-  
կան կերպով զինաթափուէին Օսմանեան Բանակի Հայ զինուոր-  
ները(25) :

12 Ապրիլի 1915.— Ներքին գործերու նախարարը կը յայտնէր  
Ատանայի կուսակալութեան, թէ Վանի եւ Սեբաստիոյ շրջակաները  
«հրոսակներ» էին տեսնուած եւ կեդրոնական ու տեղական իշխա-  
նութիւնները ձեռնարկած էին անոնց դէմ մաքրագործումի գործո-  
ղութիւններու(26), ուստի կը խնդրէր, որ կուսակալութիւնը ոգի  
ի բռին աշխատէր «հրոսակները» երեւան հանելու Ատանայի շրջա-  
նին մէջ ալ(27) :

13 Ապրիլի 1915.— Հեռադիրով մը Թալէաթ հրահանգեց բոլոր  
կուսակալութիւններուն ձերբակալել իշխանութիւններուն դէմ գէնք  
վերցնելու կարող բոլոր հայերը, լուսանկարել զանոնք իրենց գէն-  
քերուն հետ, ապա աքսորել զանոնք եւ տեղեկագրել կեդրոնական  
իշխանութեան անոնց եւ աքսորուող այլ հայերու ցանկերը(28) :

15 Ապրիլի 1915.— Օսմանեան Կայսրութեան նահանգապետե-  
րուն, դաւառապետերուն եւ դիւղական իշխանութիւններուն յղուե-  
ցաւ հայերու տեղահանութեան եւ ջարդին հրահանգը Թալէաթի,  
էնվերի եւ Նազըմի ստորագրութեամբ(29), երբ, միւս կողմէ, նոյն

Թուականը կրող հեռագիրով մը Վանկենհայմ իմաց կու տար Պերլին, թէ հայերը կը խնդրէին գերմանական պաշտօնական պաշտպանութիւն թուրք իշխանութիւններուն դէմ, որովհետեւ պատերազմի պատճառով համաձայնական պետութիւններն անկարող էին որեւէ ձեւով օժանդակելու իրենց(30)։ Իսկ ըստ Թալէաթի 25 Մարտի դադոնի հրահանգին՝ Ատանայի կուսակալ Հազգըն կը հրահանգէր ձերբակալել կուսակցական հայ ղեկավարները, լուսանկարել զանոնք անոնց մօտէն գտնուած ումբերուն եւ գէնքերուն հետ, եւ այդ նկարները զրկել ներքին դործերու նախարարութեան(31), երբ անդին, Վանի մերձակայ Ականց գիւղաքաղաքին մէջ մօտ 500 հայ կը դնդակահարուէին թրքական իշխանութիւններուն կողմէ։ Նոյն արարքը կատարուեցաւ շրջակայ 80 այլ գիւղերու մէջ ալ, եւ երեք օրուան ընթացքին սպաննուեցան 24,000 հայեր(32)։

17 Ապրիլի 1915.— Ատանայի կուսակալ Հազգըն կը կրկնէր երկու օր առաջ յղած իր հեռագիրը, որ ոստիկանական հրամանատարութիւնը ձերբակալէր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ատանայի նահանգի ղեկավարները եւ հանրածանօթ այլ հայեր, մեծ չափի վրայ լուսանկարէր զանոնք անոնց մօտ «գտնուած» ումբերով եւ «արդիւեալ» գէնքերով եւ նոր ձերբակալեալներու անունները աւելցնելով նախապէս արդէն իսկ աքսորուած այլ հայերու անուանացանկին վրայ՝ զրկէր կուսակալութեան(33)։

20 Ապրիլի 1915.— Սկսաւ Վանի հերոսամարտը, երբ շրջակայ գիւղերէն(34) ետք ջարդերը հասան քաղաք(35), հերոսամարտը տեւեց մինչեւ 16 Մայիսի(36) 1915 թուականը, երբ ուսական բանակը մտաւ քաղաք(37)։

23 Ապրիլի 1915.— Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին մէջ տեղի ունեցող Պառն Ժողովի խորհրդակցական հանդիպումը(38) մանրամասնօրէն քննելէ ետք հայերու հանդէպ Երիտասարդ-Թուրք կուսակցութեան կառավարութեան որդեգրած դիրքն ու անկէ ծագած դէպքերը՝ ընդունեց Գրիգոր Զօհրապի առաջարկը, որուն համաձայն յուշագիր մը պիտի մատուցուէր Բարձրագոյն Դուռ՝ խնդրելու համար կառավարութենէն, որ փոխէր իր դիրքն ու քաղաքականութիւնը հայերու նկատմամբ(39)։

24 Ապրիլի 1915.— 23/24 Ապրիլի գիշերը Պոլսոյ եւ Օսմանեան կայսրութեան այլ քաղաքներուն մէջ ձերբակալուեցան հայ մտաւորականները, կուսակցական ղեկավարներն ու գործիչները, կրօնական պետերը, առեւտրականներն ու հանրածանօթ եւ ազատ ասպարէզի տէր հայեր(40), երբ անդին՝ Չմշկածագի շրջակայ գիւղերը կը տեղահանուէին եւ Ժողովուրդը կը ջարդուէր(41)։

26 Ապրիլի 1915.— 23/24 Ապրիլի դիշերը տեղի ունեցող ձերբակալութիւններու եւ անոնց յաջորդող դէպքերու ճնշումին ներքեւ՝ կէսօրէ առաջ Խառն ժողովը նիստ մը գումարեց Պատրիարքարանին մէջ, լսեց Գրիգոր Զօհրապի պատրաստած յուշագիրը եւ ընդունելով՝ որոշեց զայն ներկայացնել վարչապետ Սայիտ Հալիմին: Նոյն օրն իսկ, կէսօրէ ետք ժամը 2:00—ին, տեղի ունեցաւ տեսակցութիւն մը Հայոց Պատրիարքին եւ վարչապետին միջեւ, որուն ընթացքին վերջինը «բացարձակապէս մերժեց Հայերու Հանդէպ անվստահութեան դադարը, եւ յանուն կառավարութեան յայտարարեց թէ իրենց վստահութիւնը անխախտ էր Հայ Ազգին հաւատարմութեան մասին»(42): Վարչապետէն ետք պատգամաւորութիւնն ունեցաւ Հանդիպում մը Թալէաթին հետ, որ յայտարարեց, թէ «կառավարութիւնը իր վստահութիւնը խախտած չէ Հայերու մասին, եւ թէ ձեռք առնուած միջոցները միայն կուսակցականներուն դէմ են: Ստոյգ է որ պետութեան դէմ որեւէ լուրջ շարժման մը ապացոյցներ չունինք»(43):

27 Ապրիլի 1915.— Պոլսոյ ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթոյ տեղեկագրեց իր կառավարութեան 23/24 Ապրիլին տեղի ունեցող ձերբակալութիւնները եւ տարագրումը ձերբակալեալներուն դէպի ներքին դաւառները՝ եղրակացնելով, թէ Հայերուն դէմ սկսած այս շարժումը մաս կը կաղմէր ոչ—թուրք բոլոր տարրերուն դէմ ստեղծուած շարժումի մը, եւ թէ ներքին դաւառներէն աննպաստ տեղեկագիրներ էր ստացած Հայերու մասին(44):

28 Ապրիլի 1915.— 23/24 Ապրիլի դիշերը կատարուած ձերբակալութիւններուն համար 26 Ապրիլին ներքին դործերու նախարարութեան ներկայացուած յուշագրին ապարդիւն մնալէն ետք՝ Գրիգոր Զօհրապ գրեց եւ Թալէաթին ներկայացուց երկրորդ յուշագիր մը(45), երբ նոյն օրը Վանկենհայմ կը հրահանգէր Կարինի գերման հիւպատոս Շէօպնըր—Րիխթըրին խուսափիլ այն երեւոյթէն, որպէս թէ գերմաններ կ'ողգէին դործածել Հայերը պաշտպանելու իրաւունք մը կամ միջամտել թրքական իշխանութիւններու գործունէութեան. ու կը խնդրէր նաեւ, որ այս կէտը, ըստ յարմարութեան, շեշտուէր Կարինի տեղական իշխանութիւններուն(46):

29 Ապրիլի 1915.— Մորկընթոյի հետ ունեցած իր տեսակցութեանէն ետք՝ Պոլսոյ աստոր—հունգար դեսպան Բալլապիչինի տեղեկագրեց Վիեննա հայկական ձերբակալութիւնները, սակայն յայտնեց, թէ առայժմ տրամադիր չէր միջամտելու ի նպաստ հայերուն(47), երբ միւս կողմէն՝ Երիտասարդ—թուրք Կուսակցութեան կառավարութիւնը կը պահանջէր Պոլսոյ հայ ժողովուրդէն իշխա-

նութիւններուն յանձնել իր ունեցած բոլոր զէնքերը: Զէնքերուն յանձնումը տեւեց տասը օր(48):

30 Ապրիլի 1915. — Կարինի զերման հիւպատոսին հետ հեռագիրներու(49) փոխանակում մը ունենալէ ետք՝ Վանկենհայմ տեղեկադրեց Պերլին 23/24 Ապրիլի ձերբակալութիւնները(50):

## Մ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

### Մ Ո Ւ Տ Բ Ի Փ Ո Ո Ա Ն

1) Թուրանականութեան ծրագիրին եւ գործընթացին համար տես Զարեանի, Միացեալ (եւ) Անկախ Թուրանիա ((Կ. Պ.), 1926), Լեռն վարդան, Հայկական Տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը (Պէյրուք, 1970), էջ 83-88. ասկէ ետք կը նշուի որպէս Հայկական Տասնհինգը. Գերսամ Ահարոնեան, Յուշամատեան Մեծ Եղեռնի (Պէյրուք, 1965), էջ 173-180. Great Britain, Foreign Office, *The Rise of Turks: The Pan-Turanian Movement* (London, 1919). Great Britain, Naval Office, *Manuel on the Turanians and Pan-Turanism* (London, 1918). Charles Warren Hostler, *Turkism and the Soviets* (London, 1957), pp. 85-194. Serge A. Zenkovsky, *Pan Turkism and Islam in Russia* (Cambrige, 1960), pp. 105-112. [S. H. Taghizade], «Doctrine et programmes des partis politiques ottomans», *Revue des Mondes Musulmans*, vol. XXII (Paris, 1913), pp. 151-164. «Les Rappports du mouvement politique et du mouvement social dans l'Empire Ottoman», *ibid.*, pp. 165-178. «Le Panislamisme et le panturquisme», *ibid.*, pp. 178-220.

2) Ըստ Ղազարեանի՝ Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան 1910 թ. ի սելանիկեան ժողովը տեղի ունեցաւ 31 Հոկտեմբերէն մինչեւ Նոյեմբերի 13. տես Հայկագն Գ. Ղազարեան, *Յեղասպան Թուրքը* (Պէյրուք, 1968), էջ 16: Ասկէ ետք կը նշուի որպէս *Յեղասպան Թուրքը*:

3) Որոշմագիրին համար տես «Իրք-իհատի ծրագիրը հայերը ազգովին բնաջնջելու համար», *Ազդակ*, 11 Յունիս 1965, էջ 3. տես նաեւ Լէօ, *Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը*, հտ. Բ. (Փարիզ, 1935), էջ 153-154: Ժողովի ընթացքին ժողովականները կատարեցին երդում մը, որուն համար տես *Յեղասպան Թուրքը*, էջ 17. իսկ Օսմանեան Կայսրութիւնը քրքացնելու ան-

կրածեշտութեան, միջոցներուն եւ գերագոյն նպատակին մասին Թալէաք արտասանեց ճառ մը, որուն համար տես *René Pinon, L'Europe et la Jeune Turquie* (Paris, 1913), pp. 100-102. *G. P. Gooch and H. Temperley, British Documents on the Origins of the War, 1898-1914*, vol. III, pt. One (London, 1938), pp. 207-209.

4) Ղազարեանի վկայութեամբ՝ «1910 Նոյեմբերին հետապնդուած այս չարաշուք ու դաւադիր քաղաքականութեան գուգընթաց, ջարդեր տեղի ունեցան Պալմաններու մէջ. Ուսումայ, Գումա-նովա, Գոչանա, Մանասքըր եւ այլ վայրեր անլի քան 2,000 հոգի սպանուեցան, բացի 5,000է անլի վիրաւորներէն»։ տես *Յեղասպան Թուրքը*, էջ 17: Մանրամասնութիւններու համար տես *Լեւոն Վարդան*, «Ջարդերը Օսմանեան Կայսրութեան մէջ», *Ջարթօնք*, 5 և 6 Յուլիս 1969, էջ 2 յաջորդաբար:

5) Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան 1911 թ.ի Սելանիկի համաժողովի եզրակացութեան համար տես «Ինչպէս նիւթուեցաւ Մեծ Եղեռնը», (Կարօ Գեղորգեան, *Խմբ.*), *Ամէնուն Տարեգրքը* (Պէյրուք, 1965), էջ 178-179: Այս ժողովի ընթացքին արտայայտուած կարծիքներուն եւ մշակուած եզրակացութեան եւ ծրագրերին համար տես նաեւ Տոքթ. Եռհաննէս Լեփսիւս, *Գաղտնի Տեղեկագիրք - Հաստատանի Ջարդերը* (Պէյրուք, 1965), էջ 218-219, եւ Յովհաննէս Արք. Նազեան, *Յուշեր*, հտ. Ա. (Պէյրուք, 1960), էջ 11-12:

6) *Յեղասպան Թուրքը*, էջ 20: Պալսոյ Ամբաստանիչ Ատեանի 10 Ապրիլի 1919 թ.ի որոշմագրերը ի միջի այլոց կը գրէ այս կեդրոնի մասին, թէ «Իթթիհատի պետերը ստեղծեցին «Թեշքիլաթը Մախսուսէ» անուան տակ գաղտնի կազմակերպութեան ցանց մը...: Այս գաղտնի կազմակերպութեանց վարչական մարմինը կը բաղկանար ընդհանուր կեդրոնի անդամներէն Տոքթ. Նազրմ, Պեհաւտտին Շաֆիր, Աքըֆ, Ռիգա եւ ընդհանուր ապահովութեան նախկին տնօրէն Ազիզ պէյերէն: Ասանցմէ Պեհաւտտին Շաֆիր պէյ ղրկուած է՝ արեւելեան նահանգներու մէջ գործող ուժերը ղեկավարելու, իբր գործունէութեան դաշտ ընտրելով Կարիւնը: Ռիգա պէյ ալ զրկուեցաւ Տրապիզոն, այդ շրջանին մէջ գործելու համար: Մինչդեռ Ազիզ, Աքըֆ եւ Նազրմ պէյերը կը սկսէին գործել Պալսոյ մէջ: Պալսոյ կեդրոնի հրամանատար ձեւատ պէյն ալ պաշտօն ստացաւ հաստատելու եւ գործադրելու տրուած որոշումները»։ տես Արամ Անտոնեան, *Մեծ Ոճիրը* (Պէյրուք, 1965), էջ 205-206: Կազմակերպութեան ներքին ծախքերուն համար տես *Յեղասպան Թուրքը*, էջ 33-57, Միվլան Զատէ Ռիֆաթ, *Օսմանեան Յեղափոխութեան*

Մութ Մալքերը (Պեյրուք, 1968), էջ 112-121, Ահարոնեան, էջ 201-205, Հայկական Տասնչինգը, էջ 122 և Kâzım Karabekir, *Cihan Harbine Neden Girdik, Nasil Idare Ettik?* kitab 2 (Istanbul, 1937), ss, 28-29.

7) Գործողութիւններն սկսան Իզմիրի շրջանէն, որովհետեւ ըստ ձեւալ փութայի պատնաաբանութեան՝ «Իզմիրի շրջանին մէջ գէնք և ռազմաւթերք պահուած են յոյներու և հայերու եկեղեցիներուն մէջ. եկեղեցիները վերածուած են զինարանի և քահանաներուն բոլորն ալ հրոսակապետեր են եղեր, և ուրեմն պէտք է անոնց դէմ ձեռնարկել մաքրագործումի գործողութիւնները»։ տես Cemal Kutay *Teskilati Mahsusa ve Hayberde Türk Cenki* (Stambul 1962), ss. 62-63.

8) Ըստ Թիւրքճիւլիւքի ծրագիրին, ինչպէս հետագային պիտի գրէր Կարինի գերման հիւպատոսը, Շտայնըր-Ռիխթըր, բնաջընջելով բոլոր փոքրամասնութիւնները՝ թուրք պետութիւնը պիտի վերակազմուէր միմիայն մահմետական և համաքրական հիւներու վրայ. բոլոր ոչ-մահմետականները պիտի իսլամացուէին և քրքացուէին, իսկ ուր որ անկարելի էին ասոնք՝ պիտի բնաջնջուէին անոնք. տես *Deutschland und Armenier, 1914-1918. Sammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Eingeleitet von Dr. Johannes Lepsius*, s. 309. ասկէ ետք կը նուրի որպէս *Deutschland*. Տես նաև Հ. Յակոբոս վ. Տաշեան, *Հայ Աղբի Տարագրութիւնը Գերմանական Վաւերադիւններու Համեմատ*, Մասն Ա. (Վիեննա, 1921), էջ 52:

9) Պրուսայի նահանգին, Նիկոմիդիոյ գաւառակին և շրջակայքին մէջ Մասնաւոր Կազմակերպութեան այս և հետագայ շրջաններու ընթացքին կազմակերպումին հետ ազերս ունեցող կարգ մը թուրք պետական հեռագիրներու համար տես *Յեղասպան Թուրքը*, էջ 161-162:

10) 2 Փետրուարի 1915 թ.ին այցելութիւն մը տալով Պոլսոյ գերման դեսպան վանկենհայմին՝ Թալէաթ կը հաղորդէր անոր, թէ պատերազմը լուազոյն առիթն էր վերջ մը տալու համար Հայկական Հարցին, և թէ կը խնդրէր Օսմանեան Կայսրութեան գերման դաշնակիցէն արգելք չհանդիսանալ ձեռք առնուելիք որեւէ միջոցառումի. տես *Deutschland*, s. 29. տես նաև *Յեղասպան Թուրքը*, էջ 115: Գրեթէ նոյն բովանդակութեամբ խօսակցութիւն մըն ալ տեղի ունեցաւ Էնվէրի և Պոլսոյ ամերիկեան դեսպան Մորկընթոյի

միջու, էնվեր կը յայտնէր թէ պատերազմի առիթով ամէն մարդ կը կատարէր իր կարողացածը: Եթէ թուրքը յաղթական ելլէր պատերազմէն՝ ո՛չ մէկը պիտի համարձակէր հաշիւ պահանջելու անկէ, իսկ պարտուելու պարագային՝ արդէն այդ մէկը վերջն էր թուրքին: Իսկ թուրքն այժմ կը վախճար ո՛չ մէկէն, ո՛չ իսկ Ամերիկայէն: Ուստի հայկական տարագրութիւններուն եւ ջարդերուն առիթով «Ձեր գործին նայեցէ՛ք եւ թողուցէ՛ք որ մենք ալ մեր գործին նայինք»: տես Տաշեան, էջ 213:

11) Այս առնչութեամբ Ղազարեան կը գրէ, թէ «Առաջին համաշխարհային պատերազմէն վեց ամիս առաջ, Թէշիլիաքը Մալստուէի դրամները կը հայթայթուէին էնվերի հրամանով, Թուփալ Հագգը փաշա կռչուած գորավարին կողմէ, որ Իթքիհատի գանձապահն էր եւ եղած էր նաեւ պատերազմական նախարարութեան մէջ, բանակի պարեմաւորման նիւզի պետը:

«Առաջին անգամ ըլլալով էնվեր 50 հազար ոսկի տուած էր էշրեփի՝ Թէշիլիաքը Մալստուէի գործերուն համար: Յետոյ հայերը կողոպտելով լայն միջոցներ ունեցան»։ տես *Յեղասպան Թուրքը*, էջ 55. մինչ, ըստ Պոլսոյ Ամբաստանիչ Ատեանի 10 Ապրիլի 1919 թ.ի որոշմնագիրին՝ «ձեկատ պէյ, որ այս նպատակին համար գործածած մարդերուն սեռացին գումարներ բաշխելով կը զրկէր գանձ գանձազան շրջաններ՝ ծածկագիրներու բանալիներ տալով Տաքթ. Պեհաէտտին Շաֆիի պէս պէյերու, անոնց հրամանատարութեան տակ դրաւ զինուորական ինֆանտրիներ, առատ դրամ եւ ֆանդիչ միջոցներ, գործադրել տալով այսպէս՝ դաւադրական ձեւով՝ Իթքիհատի պետերուն նպատակները»։ տես Անտոնեան, էջ 203-204. իսկ 16 Նոյեմբերի 1914 թուակիր եւ պատերազմական նախարարութեան պաշտօնատունի տնօրէնութեան ուղղուած գրութիւն մը կը վկայէ, թէ Թէշիլիաքի Մալստուէին յանձնած են ֆանդիչ նիւթեր ալ՝ տես նոյնը, էջ 206:

12) 12 Դեկտեմբերի 1918 թ.ին Պոլիս հրատարակուող Քըրֆերէն *Սապահ* օրաթերքը լոյս ընծայեց Թալէաթի մէկ ծածկագիր հեռագիրը, որ ուղղուած էր Մալաթիոյ Նըխտասարդ-Թուրք Կուսակցութեան ֆարտուղարութեան. ըստ այդ վաւերագիրին՝ Նըխտասարդ-Թուրք կուսակցութեան «ընդհանուր կեդրոնին խոշոր հարստութեան մէկ մասը գոյացած է հայ տարագիրներէ գրաւուած գոյֆերէն ու դրամներէն: Այդ հարստութեան մեծութեան մասին գաղափար մը կազմելու համար կը բաւէ ակնարկ մը նետել այն պայմանագրին վրայ որ կնքուած է մէկ կողմէ ընդհանուր կեդրոնին եւ

միւս կողմէ՝ ֆլիւպներու ու չէթէներու հետ: Ինչպէս յայտնի է, չէթէներու մաս կը կազմեն բանտերէն հանուած եւ կամ դուրսէն հաւաքուած մարդասպաններ (բնագրին մէջ՝ «գանը գաթիլլեր»): Բայց այս մարդասպանները, իրենց մեռցուցած հայոց ինչֆերուն ձեռք դպցնելու իրաւունք չունին: Իրենց երդում ընել տրուած է որ բոլոր գրաւուած ինչֆերը կեդրոն պիտի բերեն: Այդ պայմանագրութեան համաձայն, յափշտակուած իրերու փոխարժէքին կէսը Պոլսոյ ընդհանուր կեդրոնին կը զրկուէր, ձեւիյէթին տրուելու համար: Իսկ միւս կէսը կը բաժնուէր չէթէներուն: Եւ իւրաքանչիւր չէթէի 15000 ոսկի բաժին ինկած է: Ասկէ կրնաք դատել թէ ի՞նչ ֆանտիստութեան կրնայ հասած ըլլալ ընդհանուր կեդրոնին բաժին ինկած գումարը»: տես Անտոնեան, էջ 211:

13) *Ցեղասպան Թուրքը*, էջ 56: Թրֆացումի եմքակայ էին ո՛չ միայն հայերը՝ այլ նաեւ ֆիւրսերը, յոյները, ասորիները, արաբները եւ այլ ոչ-թուրք փոքրամասնութիւններ. տես Անտոնեան, էջ 89-90, Տաշեան, էջ 5, Ահարոնեան, էջ 394, Ն. Մախմուտով, *Թուրք Ժողովուրդը* (Երեւան, 1959), էջ 142-164. Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's Story* (New York, 1918), pp. 323-325. Lewis Einstein, *Inside Constantinople: A Diplomatic Diary during the Dardanelles Expedition, April-September, 1915* (New York, 1918), pp. 202-203, 220 and 274. «Greco-Turkish atrocities». *Current History*, vol. XVI, No. 3, June, 1922, pp. 475-478. Mark H. Ward, «What Turkish deportations mean», *Current History*, vol. XVI, No. 6, September, 1922, pp. 950-951. Nuri Dersimi, *Kurdistan Tarihinde Dersim* (Halep, 1952), ss. 259-327. Bernard Lewis, *The Emergence of Modern Turkey* (London, 1961), pp. 211-215. Z. N. Zeine, *Arab-Turkish Relations and the Emergence of Arab Nationalism* (Beirut, 1958), p. 75 ff. Նախապատերազմեան շրջանի թուրքարարական յարաբերութիւններուն համար տես Հ. Հ. Մարտիրոսեան, «Երիտասարդ թուրքերի ազգային ֆալաֆականութիւնը արարական երկրներում առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակում, 1908-1914 թթ.», (Հ. Գ. Իննիկեան, եւ այլք, խմբ.), *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Երկրներ եւ Ժողովուրդներ*, հտ. Գ., *Արաբական Երկրներ* (Երեւան, 1967), էջ 138-159, Ռիֆաթ, էջ 159, և *Deutschland*, էջ 305-309: Իսկ նախապատերազմեան հայ-թրֆական յարաբերութիւններու համար տես Զաւէն Արֆեսյա. (Տէր Երիւանդ), *Պատրիարքական Յուշերս* (Գահիրէ, 1947), էջ 52-72, եւ Լեւոն Վարդան, «Հայկական Եղեռնէն առաջ», *Շիրակ*, Թ. Տարի, թիւ 4-5, Ապրիլ-Մայիս, 1965, էջ 170-197:

14) 2 Օգոստոսի 1914 թ-ի թուրք-գերմանական զինուորական դաշնագրի մանրամասն մէկ վերլուծումին համար տես Լեւոն Վարդան, «Հայկական Տասնհինգը եւ թուրք-գերմանական դաշնագիրը», *Հայկազեան Հայազիտական Հանդէս* (Երւանդ Բասուրի, իմր.) (Պէյրուս, 1971), էջ 45-80: Ըստ Պոլսոյ Ամբաստանիչ Ատեանի 10 Ապրիլի 1919 թ-ի որոշմանգրի՝ «Պատերազմին յայտարարութեանէն շատ առաջ՝ պատերազմական գործողութիւններու մասնակցելու մասին Իթթիհատի ունեցած փափաքն ու նպատակը կը հաստատուի(ն) 17 Օգոստոս 1330 (1914) թուակիր գրութիւնով մը, որ կուսակցութեան ֆարտուղար Միթհատ Շիւքրի պէյի ստորագրութիւնը կը կրէ, եւ Կարնոյ կուսակալին միջոցաւ ուղղուած է Պեհաէտտին (Շաքիր) պէյի»։ տես Անտոնեան, էջ 207:

15) Բայց, իրականութեան մէջ, Հայկական Տասնհինգը արդէն իսկ որոշուած էր Օսմանեան Կայսրութեան Երիտասարդ-Թուրք կուսակցութեան կառավարութեան կողմէ, եւ 1914 թ-ի «Յուլիս 25-ին ընդհանուր զօրակոչէն հինգ օր ետք», ինչպէս կը վկայէ Արշակ Ալպոյանեան, կառավարութիւնը «բաժնած էր կնքեալ պահարաններ բոլոր մուխթարներուն, ցեղապետներու եւ ոստիկանական պահակաւորներուն, խստիւ պատուիրելով որ մինչեւ որ հրաման չտրուի անոնք չբացուին»: Այս նամակներով կը հրահանգուէին տեղահանութիւնն ու ջարդերը հայութեան: Տես Արշակ Ալպոյանեան, *Պատմութիւն Մալաթիոյ Հայոց* (Պէյրուս, 1961), էջ 927:

16) Օտար պետութիւններու տրուած առանձնաշնորհումները ջնջող հրամանագրիին համար տես *The Orient*, vol. V, No. 37, Constantinople, September 16, 1914, p. 361.

17) Ahmed Emin [Yalman], *Turkey in the World War* (New Haven, 1930), p. 75. Ըստ Պոլսոյ գերման դեսպան Վանկեմհայմի 22 Հոկտեմբերի 1914 թ-ի հեռագրիին՝ ռուսերու դէմ յարձակումի անցնելու թրքական զազունի հրահանգը կ'ըսէր, թէ թրքական նատտորմիզը պէտք է որ ծովային գերազանցութիւն ապահովէ Սեւ ծովի վրայ. «Գտէ՛ք ռուսական նատտորմիզը եւ յարձակեցէ՛ք անոր վրայ, ուր որ ալ գտնէ՛ք գայն՝ առանց պատերազմի յայտարարութեան»։ տես Ulrich Trampener, *Germany and the Ottoman Empire, 1914-1918* (Princeton, New Jersey, 1968), p. 54. տես նաեւ *Յեղասպան Թուրքը*, էջ 26:

18) Ըստ կիրակոսեանի՝ «1914 թ. Նոյեմբերի կէսերին ընդամէնը 4-5 օր տիրելով Արտուինի գաւառին, թուրքական զօրմասերը զազանային հաշուեյարդար տեսան հայ բնակչութեան հետ:

Արտուին քաղաքի բնակչութեան միայն կեսին յաջողուեց փախչել: Մնացածներին, ինչպէս նաեւ Արտանուշ, Տանձուտ, Շավշէտ գիւղերի բնակիչներին ջարդուեցին, կախաղան հանեցին կամ կոզոպտեցին ու պատուազրկեցին. «ջարդը անօրինակ եւ անեմաստկալի է, որ նկարագրելը սուկում ու սարսափ է առաջ բերում մարդու մէջ...», - գրել է «Մշակ»ի թղթակիցը: «Արտուին գաւառի բոլոր հայաբնակ գիւղերը միանգամից ոչնչացան»․ տես Ջ. Ս. Կիրակոսեան, *Առաջին Համաշխարհային պատերազմը եւ Արեւմտահայութիւնը*, 1914-1916 թթ. (Երեւան, 1967), էջ 256-257: Լեփսիուս կը գրէ ի միջի այլոց, թէ «Պաթուհի եւ Օլթիի վրայ թուրքերու յառաջխաղացումի ստեղծում, որու մարզերու հայ գիւղերը թուրքերէն գրաւուեցան եւ ջարդուեցան...: Այսպէս Արտանուշի եւ Օլթիի մարզին մէջ, Պերտու եւ Երուր գիւղերը թալանուեցան, 1276 հայեր սպանուեցան, 250 կիներ եւ մանկամարդ աղջիկներ առեւանգուեցան, 24 կիներ ինքզինքնին թունաւորեցին չրոնապղծուելու համար: Մնացեալը, շուրջ 500 կիներ եւ մանուկներ, ազատագրուեցան որու գորագունդներուն կողմէ: Ստորին ձորոխի մասերուն մէջ (այս գետը Պաթուհի մօտ Սեւ ծով կը թափի) Ամարները (մահմետական վրացիները) թուրքերուն միացան եւ մասնակցեցան այն ջարդերուն, գորս ձորոխի հովտին մէջ, թուրք հրոսախումբերը Արտուինի եւ Արտանուշի գիւղերուն մէջ ի գործ դրին: Այս մարզին մէջ թուրքերէն եւ անարներէն ջարդուած կովկասահայերուն թիւը 7000 կը հաշուուի»․ տես Լեփսիուս, էջ 80-81. իսկ Սալմաստի եւ Ուրմիոյ շրջաններուն մէջ կատարուած ջարդերուն համար տես Տաշեան, էջ 44, *Deutschland*, s. 305-309, եւ Viscount Bryce, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16* (Beirut, 1972), pp. 100 ff.

19) Սրբազան Պատերազմի յայտարարութեան համար տես Elliot G. Mears, *Modern Turkey, 1908-1923* (New York, 1924), p. 506.

20) Liman von Sanders, *Cinq ans de Turquie* (Paris, 1923), p. 46.

21) Հետագային, ըստ Պոլսոյ ամերիկեան դեսպան Մորկընթոյի, թրքական պատասխանատու պաշտօնատար մը «չէր ծածկեր այն իրադրութիւնը թէ կառավարութիւնը սարքած էր գանձի եւ, պաշտօնական դասակարգերու բոլոր թուրքերուն նման, անիկա խանդավառութեամբ կը գնահատէր ասելի ցեղին հանդէպ ցոյց տրուած այդ ընթացքը: Այս պաշտօնատարը յայտնեց ինծի, թէ բոլոր մանրամասնութիւնները Միութիւն եւ Յառաջդիմութիւն կամ միտէի կեդրոնի գիշերային նիստերու ընթացքին եղած էին խորհրդակցութեան նիւթ»․ տես Morgenthau, p. 307: Ըստ Մորկընթոյի

քարգմանիչ ենովք Արմենի՝ այս պաշտօնատարը Պոլսոյ ոստիկանապետ Պետրին է. տես Հենրի Մորկինթոյ, *Մը. Մորկինթոյի Յիշատակները* (Պէյրուք 1965), էջ 267:

22) *Յեղասպան թուրքը*, էջ 115: Ըստ Պրայսի Կիլիկիոյ տաքագրութիւնները պէտք էր որ ծրագրուած ըլլային առնուազն Մարտի մէջ եւ գուցէ անկէ ալ առաջ. տես Bryce, p. 466:

## 1915 թ.

1) Ուրմիոյ, Սալմաստի եւ Հեֆիարիի շրջաններուն մէջ բրբական յառաջացող բանակները ֆանդեցին հայերու եւ ասորիներուն պատկանող գիւղերուն մեծամասնութիւնը. ֆանդուած գիւղերուն ոչ-ամբողջական մէկ ցանկին համար տես Bryce, pp. 585-586:

2) Նոյն, էջ 105, 119-150 եւ 577-586:

3) *Deutschland*, s. 29 եւ *Յեղասպան թուրքը*, էջ 115, 145-146 եւ 178. տես նաեւ Հայկազն Գ. Ղազարեան, «Գաղտնի փաստաթուղթ մը հայկական ջարդերու մասին», *Ազդակ*, 18 Օգոստոս 1964, էջ 2:

4) *Յեղասպան թուրքը*, էջ 21-22, 93-103 եւ 183-186. Նագլեան, էջ 56-57 եւ 563. Ահարոնեան, էջ 189. Զուէն Արֆեսյաւ., էջ 51-52. Տաշեան, էջ 163-164. Անտոնեան, էջ 209-219. Լեոն վարչան, «Հայկական եզեռնէն առաջ», *Շիրակ*, Թ. Տարի, քիւ 4-5, Ապրիլ-Մայիս, 1965, էջ 170-195. Գեորգ Մեսրոպ (խմբ.), *Հայկազէն Տարեգիրք*, Ա. Տարի, Պոլիս, 1922, էջ 108-110. եւ Morgenthau, pp. 295 and 301-303:

5) Ժողովի մանրամասնութիւններուն համար տես Անտոնեան, էջ 187-188. տես նաեւ Սեպուհ Ակունի, *Միլիոն ժը Հայերու Զարդի Պատմութիւնը* (Կ. Պոլիս, 1921), էջ 27-28: Երեւներու Գործադիր Կոմիտէն կը բազկանար կրթական նախարար Շիւքրիէն եւ բժիշկներ Նագրմէն ու Պեհաէտտին Շաֆիբէն. ասոր առաջին միսի արձանագրութեան համար տես *Յեղասպան թուրքը*, էջ 34-35 եւ 40-47, եւ Րիֆաթ, էջ 112-118:

6) Ակունի, էջ 295:

7) Պեհաէտտին Շաֆիբի կողմէ Ատանա յզուած նամակին համար տես Անտոնեան, էջ 87-88. նոյնին համար տես նաեւ *Յե-*

ղասպան թուրքը, էջ 178-179. Ահարոնեան, էջ 188-189. Հայկական Տասնհինգը, էջ 66-67: Սալգարիկին՝ Փրոֆեսոր Հայկ Արամեան այս վաւերագիրի իր քարգմանութեան համար կու տայ 25 Մարտի 1915 թուականը. տես Ահարոնեան, էջ 528:

8) U. S. A., Department of State, *Foreign Relations of the United States : 1915, Supplement* (Washington, 1928), p. 979. ասկէ ետք կը նշուի որպէս 1915, *Supplement*.

9) Ակունի, էջ 140:

10) 1915, *Supplement*, pp. 979-980.

11) Հրամանագիրին համար տես *The Orient*, vol. VI, No. 9, (Constantinople, March 3, 1915), p. 61.

12) (Զաւարիա Պզտիկեան, խմբ.), *Կրիկիւն Կսկիծնեք - Վաւերագրեր Կրիկիւն Կաթողիկոսական Դիւանէն* (Պէյրուք, 1927), էջ 136. ասկէ ետք կը նշուի որպէս *Կրիկեան Կսկիծնեք*: ձեւալի հրամանագիրին համար տես *Deutschland*, s. 226-227. նոյնին հայերէն մէկ քարգմանութեան համար տես Տաշեան, էջ 71-73:

13) *Կրիկեան Կսկիծնեք*, էջ 138. այս առթիւ, կեղծելով իրականութիւնները, ձեւով կը գրէր, թէ «Զէյթունի մէջ ապստամբութիւն ծագած է: Զինուորական ուժերը գործի սկսած են: Կառավարութեան պարտականութիւնն է հայ եւ իսլամ պաշտպանել: Եթէ որեւէ իսլամ անհատ յարձակի հայու մը վրայ՝ անմիջապէս պատերազմական ատեան պիտի յանձնուի: Ժողովուրդը թող համագիտ մնայ: Զինուորական իշխանութիւնն է որ աւագակները կը հետապնդէ»: Տես *Ճեղասպան թուրքը*, էջ 176-177: Իսկ Սահակ Կաթողիկոսին ուղղակի կը գրէր ձեւով, թէ հայ ժողովուրդը պատեաւ մը չունէր մտահոգուելու, թէ անոր բոլոր իրաւունքները պիտի պաշտպանուէին եւ այս ուղղութեամբ ամէն կողմ ամենէն խիստ հրահանգները յղուած էին արդէն. տես *Կրիկեան Կսկիծնեք*, էջ 138:

14) Նոյն, էջ 142:

15) Bryce, p. 258:

16) Նազեան, էջ 468:

17) Պեհաւտտին Շաֆիի Ատանա յղած երկրորդ նամակին համար տես Անտոնեան, էջ 89-90. *Ճեղասպան թուրքը*, էջ 179 եւ *Հայկական Տասնհինգը*, էջ 69-70: Փրոֆեսոր Հայկ Արամեան այս վաւերագիրի իր քարգմանութեան մէջ կու տայ 18 Նոյեմբերի 1915 թուականը. տես Ահարոնեան, էջ 528:

- 18) *Յեղասպան թուրքը*, էջ 180:
- 19) Ճեմալի շրջաբերական ազդարարագիրին համար, որ լոյս տեսաւ 31 Մարտի 1915 թ.ին, տես *Deutschland*, թ. 45. տես նաեւ Տաշեան, էջ 67-68:
- 20) Լեփսիուս, էջ 186:
- 21) Մ. Արզումանեան, *Հայաստան, 1914-1917* (Երևան, 1969), էջ 366-368: Ըստ Յ. Ճ. Սիրունիի՝ ինֆնապաշտպանութիւնն սկսաւ 29 Մարտին եւ տեւեց մինչեւ Մայիսի 11-ը. տես *Էջմիածին*, 1965, թիւ Բ-Գ-Դ, էջ 24: Նոյն թուականը կու տայ նաեւ Յ. Հ. Յարութիւնեան. տես նոյնը, էջ 144:
- 22) Վ. Կեսարացի կու տայ 14 Յունիսի 1915 թուականը. տես Ահարոնեան, էջ 357. Նազլեան՝ 9 Ապրիլի 1915 թուականը. տես Նազլեան, էջ 461: Ըստ Կիրակոսեանի՝ «Զէյթունի եւ առ հասարակ Կիլիկիայի հայ բնակչութեան տարագրութիւնն սկսուեց 1915 թուականի Ապրիլի 8-10-ին»։ տես Կիրակոսեան, էջ 377: Արզումանեան կու տայ «Մարտի կէսերից» բացատրութիւնը. տես Արզումանեան, էջ 436. մինչ *Բէյթ* էյնզլի կը գրէ, թէ առաջին տեղահանութիւնը տեղի ունեցաւ «շաբաթ օր մը», որ կու գայ Ապրիլի 10-ին. տես Bryce, pp. 475, 481. տես նաեւ Bryce, pp. 479-491, 640. Տաշեան, էջ, 145-174 եւ Ազատի, *Զէյթուն եւ Իր Շրջակաները* (Պէյրութ, 1968), էջ 397:
- 23) Նախ, 23 Մարտին, ախարոսեցան Զէյթունի 300 երես-լիները. տես Ակունի, էջ 48: Իսկ Նորաշխարհեան կու տայ Մարտի 26 թուականը. տես Լ. Նորաշխարհեան, *Մոսյլ Օրեր - Զէյթունի Վերջին Անցքերը*, 1914-1915 (Պէյրութ, 1950), էջ 80:
- 24) Այս առթիւ, իր յուշերուն մէջ կրկնելէ ետք Թալէաթի բոլոր լուսարանութիւններն ու չմեղանմաները՝ Զաւէն Պատրիարք ուղղակի կը մէջբերէ նաեւ անոր խօսքերը, որոնց համաձայն՝ «խըստութիւնը որ ի գործ կը դնենք ընդհանուր է, հրահանգ տուած ենք որ խնդիրները չմեծցնեն, այլ տեղւոյն վրայ խեղդեն: (Իսկ) Կարնոյ շուրջի սպանութիւններէն տեղեկութիւն չունինք»։ տես Զաւէն Արքեպս., էջ 94:
- 25) Նազլեան, էջ 564:
- 26) Մինչդեռ ոչմարտութիւնը կը ներկայացնէր բոլորովին այլ պատկեր. իրականութեան մէջ՝ երբ Սարիգամիշի մակատամարտէն ետք էնկեր՝ պարտուած, դէպի տուն վերադարձի մամբուն

վրայ հասաւ Սեբաստիոյ եւ կեսարիոյ միջեւ գտնուող կէմէրէկ գիւղաֆառաքը՝ հրամայեց իր զինուորներուն կոտորել ֆաղափին բնակչութիւնը, որուն 13,000 հայերէն բնաջնջուեցաւ 10,000-ը. տես կիրակոսեան, էջ 330. տես նաեւ Յ. Թիւրապեան, *Դրուազներ Հայկական Եղեռնէն եւ Վերածնունդ* (Փարիզ, 1946), էջ 90-92, եւ Joseph L. Grabill, *Protestant Diplomacy and the Near East: Missionary Influence on American Policy, 1810-1927* (Minneapolis, 1971), pp. 50-60.

27) Հեռագիրին համար տես Ահարոնեան, էջ 342: Ապրիլի 13-ին եւ 15-ին ֆաշուած գոյգ հեռագիրներով Ատանայի կուսակալ Հագգըն կը հաղորդէր Թալէաթի հրամանը իրեն եմքակայ ֆաղափային եւ ոստիկանական իշխանութիւններուն: Հեռագիրներուն համար տես նոյնը:

28) Հեռագիրին համար տես նոյնը, էջ 339:

29) Հրահանգին համար տես Ա. Ն. Մնացականեան, *Կոմունիստական Պարտիան Հայ Ժողովուրդի Ազատարարն է* (Երեւան, 1964), էջ 66-67. նոյնին համար տես նաեւ Ահարոնեան, էջ 33-34 եւ *Հայկական Տասնհինգը*, էջ 73-74:

30) Trumpener, pp. 205-206. տես նաեւ Տաշեան, էջ 10:

31) Հրահանգին համար տես *Յեղասպան Թուրքը*, էջ 180-181:

32) Morgenthau, p. 297:

33) Հրահանգին համար տես նոյնը, էջ 182. տես նաեւ Ահարոնեան, էջ 339:

34) Ըստ կարգ մը աղբիւրներու՝ 1914 թ.ի Նոյեմբերէն սկսեալ թուրքերն արդէն իսկ յարձակողականի անցած էին Արմանի, Գաւաշ-Կարնկանի, Փեսանդաշտի, Կարկառ գաւառակի 18 հայկական գիւղերուն դէմ: Յարձակած էին նաեւ Ալեքսիպոլի 21 հայաբնակ գիւղերուն, Հայոց Զորի 50 գիւղերուն, Բերկրիի շրջանի 40 գիւղերուն վրայ. միայն Բերկրիի շրջանէն կոտորած էին 5000 եւ Արմէլ գաւառի Ականց գիւղէն 4000-է աւելի հայեր: Նոյնը կատարեր էին վանի 17 գաւառներուն մօտ 100 գիւղերուն մէջ: Այս բոլորը պատճառ եղան, որ միայն վանի նահանգին մէջ խռոխողուէին 20,000-է աւելի հայեր, եւ մտածե՛լ որ այս բոլորը տեղի կ'ունենային Ապրիլի 20-էն շա՛տ առաջ. տես Կիրակոսեան, էջ 304-307. տես նաեւ Ա. Դարբինեան, *Հայ Ազատագրական Շարժման Օրերէն - Յուլի 1890-1940* (Փարիզ, 1947), էջ 304-314, եւ Արզումանեան, էջ 335-348:

35) Զաւէն Պատրիարք կը գրէ իր յուշերում մէջ, թէ «Ապրիլի սկիզբը վաճայ դէպքը տեղի ունեցաւ, որ առիթ տուաւ կառավարութեան քաղաքին հայ թաղերը ուղարկելով 300 տունի չափ մոխիր դարձնելու եւ 5-600 մարդ սպաննելու...»։ տես Զաւէն Արքեպս., էջ 132. տես նաեւ Ահարոնեան, էջ 449-450 եւ 729-770. Նազլեան, էջ 165-175. Լեփսիուս, էջ 84-101. Տաշեան, էջ 44-46. Ակունի, էջ 39. Յ. Հ. Յարութիւնեան, «Վանի Ապրիլեան Հերոսամարտը», էջ 156. Ս. Կէօրկիզեան, *Վասպուրականի Հերոսամարտը*, 1915 *Ապրիլ 7 - 1915 Մայիս 7* (Պէյրութ, 1965), էջ 110. եւ Bryce, pp. 35, 63, 237:

36) Ակունի, էջ 146, եւ Bryce, p. 41: Կէօրկիզեան կու տայ 4 Մայիսի թուականը, տես Կէօրկիզեան, էջ 267:

37) 29 Յունիսի 1915 թ.-ին Բարձրագոյն Դուռը յայտարարեց, թէ 150,000 թուրքեր մնացած էին Վանի նահանգին մէջ, եմքակայ՝ ռուսերու եւ հայերու կողմէ ջարդուելու վտանգին: Նոյն տարուան Օգոստոսին էնվեր կը նշէր, թէ ջարդուած էին բոլորն ալ: Երկու ամիս ետք, 1 Հոկտեմբերին, Պերլիի թուրք դեսպանատունէն կը հազարդուէր գերման մամուլին, թէ Վանի նահանգին մէջ թուրք գոհերու թիւը «180,000-էն նուազ չէր»։ տես Trumpener, p. 222 եւ Bryce, pp. 627, 639: Սակայն ա՛յլ բան էր իրականութիւնը. յառաջացող ռուսական բանակներուն առջեւ փախուստ տուեր էին Վանի նահանգին 30,000 թուրքերը, իսկ մնացեալ 150,000 մահմետականները, որոնք ֆիւրսեր էին՝ մնացեր էին իրենց տեղերը, ինչպէս կը վկայէ Լեփսիուս. իսկ Վանի դէպքերուն ընթացքին թուրքերը ունեցած էին միայն 18 կորուստ. տես André Mandelstam, *La Société des Nations et les Puissances devant le Problème Arménien* (Beyrouth, 1970), pp. 355-356: Հետագային, նշմարութիւնները շրջելով եւ փաստերը կեղծելով՝ Թալէթ պիտի գրէր իր յուշերում մէջ, թէ «Ժամանակ մը ետք ռուսերու, անլիի ճիշդը՝ հայ կամաւորներու կողմէ գրաւուեցաւ Վանը: Հետագային հասկցուեցաւ, որ այս կամաւորները կը գտնուէին Դաշնակցական Կամիսէի անդամ եւ Օսմանեան երեսփոխանական ժողովի երկու երեսփոխաններ՝ Փասթըրմանեանի եւ Փափագեանի ղեկավարութեան տակ: Իրենք զիրենք փրկել կարողացած կարգ մը (*թուրք*) անհատներու տուած վկայութեանէն իմացուեցաւ Վանի գրաւումի միջոցին փախուստ տալ չկարողացող մահմետական ժողովուրդին կոտորումը եւ կիներու պատառակումը. իսկ շատ մը երիտասարդ կիներու եւ աղջիկներու տուներու մէջ հաւաքուելով այս տուներում որպէս հանրատուն նկատի առնուիլը հասկցուեցաւ: Վանէն փախուստ տուող եւ հազարաւոր

կիներէ, այրերէ եւ մանուկներէ բաղկացած անգէն ժողովուրդին դէմ արագահարուած է գործածուած հայերուն կողմէ» . տես *Talât Pashanin Hatiralali* (Istanbul, 1958), s. 60.

38) Խորհրդակցական ժողովին ներկայ էին Օսմանեան Կայսրութեան ծերակոյտի անդամ Զարեհ Տիլպէրը, օսմանեան երեսփոխանական ժողովի անդամներ Գրիգոր Զօհրապն ու Վարդգէս Սէրէնկիւլեանը, Յարութիւն Պօշկէզէնեանը եւ Յովսէփ Մարութեանը: Նիստի արձանագրութեան համար տես Զաւէն Արֆեպս., էջ 95-96:

39) 26 Ապրիլին կայացած Խառն ժողովի հանդիպումին սեղան դրուեցաւ Զօհրապի պատրաստած յուշագիրը, որուն համար տես *Յեղասպան Թուրքը*, էջ 379-380: Բաղդատէ Զաւէն Արֆեպս., էջ 98:

40) Ըստ Զաւէն Պատրիարքի՝ «Պոլսէն 250-է աւելի անձեր ւախորուեցան Զանգրըրը (Քասթիւնուսի նահանգ) եւ Այաշ (Գաղատիա) . բայց գաւառներուն ւախորակները աւելի շատ են թիւով, Պոլսոյ հետ բաղդատելով» . տես Զաւէն Արֆեպս., էջ 133: Ըստ Ա. Ն. Մնացականեանի՝ այդ եւ վաղայաջորդ օրերը ձերբակալուեցան «196 գրող, 168 նկարիչ, 575 երաժիշտ, երգահաններ եւ կատարողական խմբերի մասնակիցներ (երգողներ, պարողներ, նուագողներ), 336 բժիշկ, դեղագործ, ատամնարոյժ, 176 ուսուցիչ եւ կուլէջների պրոֆեսորներ, 160 իրաւաբան, 62 մարտարապետ, 64 դերասան» . տես Ահարոնեան, էջ 35: Լեփսիուս կը նշէ, թէ «ձերբակալութիւնները կանոնաւորութեամբ շարունակուեցան 21 Ապրիլէն 10 Մայիս, չորս շաբաթներու ընթացքին: Այսպէս 21 Ապրիլէն սկսելով ձերբակալեցին եւ տարագրեցին Իզմիթի մէջ՝ 100, Պարտիզակի մէջ՝ 80, Պրուսայի մէջ՝ 40, Պանտրմայի մէջ՝ 40, Պալքեսերի մէջ՝ 30, Ատարագայի մէջ՝ 80 առաջաւոր հայեր: Ապրիլի վերջը եւ Մայիսի սկիզբը, այս ձերբակալութիւններուն կը յաջորդեն Մարգուան՝ 20 հոգիով, Տիգրանակերտ՝ նոյնպէս 20 հոգիով: Մայիսի առաջին շաբաթներուն, Կարիւնի մէջ ձերբակալուած ու տարագրուած ծանօթ հայերու թիւը հասաւ 600-ի, 500 ալ Սեբաստիոյ, 50 Քեռիի (Քրիի), 50 Շապին Գարահիսարի եւ 25՝ Խնուսի մէջ: Մայիսի երկրորդ կէսին, կարգը Տիգրանակերտին եկաւ, նախ 50 հոգիով, յետոյ 300 ձերբակալութեամբ եւ Կեսարիայի՝ 200 հոգիով: Նոյնը տեղի ունեցաւ Խարբերդի եւ Նոզաուի մէջ: Նոյնպէս մէկ քանի ծանօթ հայեր ձերբակալուեցան Մարաշի եւ Ուրֆայի մէջ: Այնքապի մէջ 26 ձերբակալուածներէն 25-ը ազատ արձակուեցան» . տես Լեփսիուս, էջ 28: Իսկ ըստ Մէյրի Էլլըն Մուր Կէյթսի օրագիրին, միայն 27

Ապրիլի հարուածին՝ Պոլսոյ մէջ «Կիրակիին կրկին սպառիչ օր մըն էր: Առաւօտեան քնդանօթ-աճուրթիւնը ընկերացաւ մեր մախանաշին: Հեռաձայնային լրատուութիւն մը հաղորդեց մեզի ձերբակալութիւնը այս ֆազաֆին մէջ 100 առաջաւոր հայերու» . տես Grabill, p. 66: Այս ձերբակալութիւններու առիթով տեղի ունեցած տեսակցութեան մը ընթացքին Թալէաք յայտնեց Վանկենհայմին, թէ այս եւ առաք մնան այլ միջոցառումներ պետութեան ապահովութեան համար էին եւ թէ Բարձրագոյն Դուռը այլեւս չէր ուզեր հանդուրժել գոյութիւնը ֆազաֆական անջատ կազմակերպութիւններու՝ կրօնական հաւաքականութիւններէ ներս . տես Trumpener, pp. 207-208. Իսկ Մարկընթոյնի հետ ունեցած իր մէկ այլ տեսակցութեան ընթացքին՝ անիկա յայտնեց, թէ հի՛շո՛ւ էր թէ Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան խտտութիւնները ուղղուած էին որքան յեղափոխական շարժումները գապելու՝ նոյնքան նաեւ Համաձայնականներուն դէմ, եւ թէ կառավարութիւնը շատ հայ կը ձերբակալէր . տես Grabill, p. 65: Առ այդ ամերիկեան դեսպանը դիմեց աստրօ-հունգար դեսպան Բալլալիչիկին, որ վերջինը միջամտէր քրքական իշխանութիւններուն մօտ՝ ի նպաստ հայերուն . իսկ իմք իր կարգին տեղեկագրեց դէպքը Ռաշինկըն . տես 1915, Supplement, p. 980: Զանազան վայրերէ ձերբակալուած հայերու մէկ անուանացանկին համար տես Ապրիլ Տասնըմէկի Սգահանդէսի Ցանձնախումբ, Յուշատետրեր Ապրիլ Տասնըմէկի (Կ. Պոլիս, 1919). Ահարոնեան, էջ 513-525 եւ Կիրակեսեան, էջ 295-297: Ձերբակալուելով սպաննուած կրօնականներու մէկ ցանկին համար տես Ահարոնեան, էջ 504-514. Թէոսիկ, Գողգոթա, Ա. Մաս (Պէյբուք, 1966) եւ նոյն, Ա. Մաս, 2 - վան (Պէյբուք, 1966) եւ Ա. Հատիտեան, «Նոր Ղեւոնդեանք», էջ միածին, 1965, թիւ Բ-Գ-Դ, էջ 58-70. հայ բժշկութեան ունեցած կորուստին համար տես Տոքթ. Գեորգ Պ. Քեշիշեան, «Հայ բժշկագիտական մտքին տուրքը Մեծ Եղեռնին», Շիրակ, Թ. Տարի, թիւ 4-5, Ապրիլ-Մայիս, 1965, էջ 284-291: Մտաւորականներուն վերապահուած ֆակտագրիքին համար տես Յեղասպան Թուրքը, էջ 149-151. Միֆայէլ Շամտանեան, Հայ Մաքին Հարկը Եղեռնին (Հալէպ, 1947), Տոքթ. Ա. Նագգաշեան, Այալի Բանուր ((Նիւ Եորք), 1926). Ակունի, էջ 53-59, եւ Նազիեան, էջ 565: Հետագային, ըստ Վանկենհայմի 30 Ապրիլի 1915 թ.ի մէկ տեղեկագրիքին՝ Թալէաք պիտի պատմաւարանէր այս ձերբակալութիւնները, թէ «յարմար վայրկեանն էր» ախտաբերու այն բոլորը, որոնք կրնային պետական որոշումներու հետագայ գործադրութեան որեւէ ձեւով դէմ կենալ, թէպէտեւ «անշուշտ շատերը որեւէ ձեւով յանցաւոր չեն» . տես Deutschland, s. 60, եւ Տաշեան, էջ 55:

41) Միսնացի, «Զմշկածագ եւ գիւղերը», *Ոսկեզետակ*, հտ. Գ. (Պէյրուք, 1948), էջ 257:

42) Զաւէն Արքեպս., էջ 98: Հետագային, 25 Ապրիլի 1919 թ.ին, տեղի ունեցած սգահանդէսի մը ընթացքին Պատրիարքը կը բերկնեց Սայիտ Հալիմի խօսքերը, ըստ որոնց՝ «պատերազմէն առաջ համաձայնական տէրութեանց դիմելով ուզեցինք անջատել ձեր ազգը օսմանեան պետութենէն. ձեր ըրածներուն պատիժն է որ կը կրէք. հայերու մասին եղածը արդիւնքն է ծրագիրի մը՝ որ պիտի գործադրուի». տես Անտոնեան, էջ 81-82:

43) Զաւէն Արքեպս., էջ 100: Մինչ յետ մահու հրատարակուած իր յուշերուն մէջ Թալէաթ կը ներկայացնէ հայերու տարագրութիւնն ու ջարդերը որպէս արդիւնք գիտնալ այն ըմբոստութիւններուն, որոնք, ըստ իրեն, տեղի ունեցան Զէյթունի, Վանի, Նիկոմիդիոյ, Ատաբազարի, Պուրսայի, Ատանայի, Սամսնի, Իզմիրի, Ուրֆայի, Շապին Գարահիսարի ու Եոզղատի նահանգներուն մէջ. գարմանալի չէ բնաւ, որ Թալէաթ կամաւոր կերպով մտացութեան է տուած Արեւմտեան Հայաստանի նահանգներուն մեծամասնութիւնը, որ պիտի կազմէր կորիզը 8 Փետրուարի 1914 թ.ի ռուս-թրքական համաձայնութեամբ ստեղծուելիք ինքնուրոյն Հայաստանի մը երկու նահանգներուն. տես Talât Pasa, ss. 62-70:

44) *Յեղասպան Թուրքը*, էջ 63. տես նաեւ 1915, *Supplement*, p. 980.

45) Յուշագիրքին համար տես *Յեղասպան Թուրքը*, էջ 380-381:

46) Հեռագիրքին համար տես *Deutschland*, s. 58 եւ Տաշեան, էջ 11:

47) Trumpener, p. 208:

48) Լեփսիուս, էջ 195-196:

49) Trumpener, p. 207. տես նաեւ *Յեղասպան Թուրքը*, էջ 66:

50) Վանկենհայմի հեռագիրքին համար տես *Deutschland*, s. 59-60. *Յեղասպան Թուրքը*, էջ 68-69 եւ *Հայկական Տասնհինգը*, էջ 76. իսկ հեռագիրքին բովանդակութեան համար տես Trumpener, p. 208:

**CHRONOLOGY OF THE ARMENIAN MASSACRES  
PERPETRATED BY THE TURKS,  
FROM JANUARY 2ND TO APRIL 30, 1915**

LEVON VARTAN

The Armenian massacres, perpetrated in 1915 by the Turks, constituted only part of the pan-Turanian scheme followed up by the Young Turks. World War I provided a splendid opportunity for the allies of Germany, the Turks, to annihilate the Armenians and resolve the Armenian Question.

Turkish, Armenian and other documents and studies evidence the fact that the leaders of the Young Turks had planned the massacres and the forced deportations with fastidious care and had recruited, in Constantinople and other important centers of Western Armenia, the needed manpower for their dark designs. A chronological study also reveals the double-faced diplomatic moves of the Young Turks: they reassured, on the one hand, that Armenians were committed to the utmost care of the Turkish government, and, on the other, relentlessly massacred and deported the Armenians, thus vacating Western Armenia of its native people.